ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/41

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.04.2019թ. թիվ 26/26-1/7037-19 գրությամբ «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Վանաձորի համայնքապետարանի (հետայսու՝ նաև Պատվիրատու) 22.04.2019թ. թիվ 061/4157 գրության հիման վրա, 29.04.2019թ. թիվ 26/26-1/7037-19 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 06.05.2019թ. ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար՝ հայտարարված «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ 19/43» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին և ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, գնահատող հանձնաժողովը որոշել է՝ առաջին տեղ զբաղեցնող մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ 19/43» ծածկագրով ընթացակարգի հրավերով որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

16.04.2019թ. Ընկերությունը էլեկտրոնային հասցեից՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային հասցեին է ուղարկել պահանջված որակավորման չափանիշին վերաբերող փաստաթղթերը:

Գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.04.2019թ. տեղի ունեցած նիստի 3-րդ արձանագրության համաձայն՝ «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ եթնակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընկերությունը հայտնել է, որ «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ն որակավորման չափանիշի փաստաթղթերը ուղարկել է ոչ միայն 16.04.2019թ. էլեկտրոնային տարբերակով, այլ նաև երբ հեռախոսազանգի միջոցով կապ է հաստատվել գնահատող հանձնաժողովի քարտուղարի հետ և Ընկերությունը տեղեկացել է, որ «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի հայտը մերժվում

է որակավորման չափանիշների փաստաթղթերը չներկայացնելու հիմքով, քանի որ այդ փաստաթղթերը էլեկտրոնային փոստի միջոցով չեն հասել պատվիրատուին և մտածելով, որ միգուցե առկա է խնդիր էլեկտրոնային փոստի միջոցով փաստաթղթերը ուղարկված լինելու հետ, «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայտնել է, որ պատրաստ է էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկված փաստաթղթերը ներկայացնել նաև առձեռն և անմիջապես Երևան քաղաքից «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի ներկայացուցիչը ուղևորվել է դեպի Վանաձորի համայնքապետարան և տարել որակավորման չափանիշի փաստաթղթերը նաև թղթային տարբերակով (այս փաստը մեր կարծիքով կփաստի նաև Վանաձորի համայնքապետարանը):

«ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ն կատարել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով իր վրա դրված պարտավորությունը, ըստ որի՝ որակավորման փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ ծանուցումը ստանալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում Ընթացակարգի քարտուղարի էլեկտրոնային հասցեին է ուղարկել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընկերությունը հայտնել է, որ առկա չէ «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի կողմից Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջների խախտում, քանզի նշված ենթակետի համաձայն՝ գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը, եթե վերջինս սահմանված ժամկետում ընդհանրապես չի ներկայացրել պահանջված փաստաթղթերը, իսկ տվյալ դեպքում առկա է «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի կողմից համապատասխան փաստաթղթերը սահմանված ժամկետում պատվիրատուի էլ. փոստի հասցեին ուղարկելու ապացույցները:

Միևնույն ժամանակ «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ն պահանջվող որակավորման փաստաթղթերը 18.04.2019թ. ներկայացրել է նաև թղթային եղանակով:

Ընկերությունը խնդրել է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի և օրինակ 2-րդ տեղ զբաղեցրած մասնակցի միջև առկա է 4.000.000 ՀՀ դրամի տարբերություն, ինչը մեր կարծիքով բավականին մեծ խնայողություն կհանդիսանա մարզային համայնքի բյուջեի վրա:

Ընկերությունը հայտել է նաև, որ «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ն բողոք է ներկայացրել Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին (թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/16), որով խնդրել է

դադարեցնել Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպված «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ 19/43» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.04.2019թ. 3-րդ արձանագրությամբ՝ «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Ընկերությունը ի լրումն վերոհիշյալ դիրքորոշման 24.05.2019թ. գրությամբ պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/41 ընթացակարգի շրջանակներում 06.05.2019թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Վանաձորի համայնքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Վանաձորի համայնքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 22.04.2019թ. թիվ 061/4157 գրությամբ հայտնել է, որ Վանաձորի համայնքապետարան կողմից կազմակերպված ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ 19/43 ծածկագրով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ն սահմանված կարգով և ժամկետում չի ներկայացրել որակավորման չափանիշները:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/41 ընթացակարգի շրջանակներում 06.05.2019թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/41 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/41 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Վանաձորի համայնքապետարանի կողմից Վանաձոր համայնքի կարիքների համար «Վանաձոր համայնքի ճանապարհային երթևեկության կազմակերպման, նշագծումների և ճանապարհային նշանների ու կահավորանքի տեղադրման գլխավոր հատակագծի մշակման և փորձաքննության աշխատանքների կազմման» ձեռքբերման

նպատակով կազմակերպվել է ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ 19/43 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 12.04.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ն ճանաչել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

3. Պատվիրատուն ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով՝ 12.04.2019թ. ծանուցել է «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ին՝ առաջարկելով հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 18.04.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինս հրավերով սահմանված կարգով և ժամկետում չի ներկայացրել որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.04.2019թ. թիվ 26/26-1/7037-19 գրությունը, Վանաձորի համայնքապետարանի 22.04.2019թ. թիվ 061/4157 գրությունը, «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի 06.05.2019թ. և 24.05.2019թ. գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ

ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Պատվիրատուի կողմից Վանաձոր համայնքի կարիքների համար «Վանաձոր համայնքի ճանապարհային երթևեկության կազմակերպման, նշագծումների և ճանապարհային նշանների ու կահավորանքի տեղադրման գլխավոր հատակագծի մշակման և փորձաքննության աշխատանքների կազմման» ձեռքբերման նպատակով կազմակերպվել է ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ 19/43 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 12.04.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ն ճանաչել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

Պատվիրատուն ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով՝ 12.04.2019թ. ծանուցել է «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ին՝ առաջարկելով հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընթացակարգի հրավերի II մասի 3-րդ կետի 3.1-րդ ենթակետով սահմանվել է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է

իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված թիվ 6.1-ի:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 18.04.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով կայացված որոշմամբ մերժել է «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինս հրավերով սահմանված կարգով և ժամկետում չի ներկայացրել որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

«ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է Ընկերության «safaryan.50@mail.ru» էլ. փոստի համապատասխան էջի քաղվածքը, համաձայն որի նշված էլ. փոստից ***16.04.2019թ. ժամը 16:27-ին Պատվիրատուի «gnumnervanadzor@mail.ru» էլ. փոստի հասցեին ուղարկվել է հրավերով պահանջվող որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:***

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը, Ընկերության կողմից ներկայացված ապացույցի հավաստիությունը ստուգելու նպատակով և առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 06.12.2018թ. թիվ 600-Ն հրամանով հաստատված Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգի 17-րդ կետով, 29.05.2019թ. նշանակել է փորձաքննություն: Փորձաքննության արդյունքում 30.05.2019թ. տրամադրված եզրակացությամբ արձանագրվել է, որ «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի «safaryan.50@mail.ru» էլ. փոստից ***16.04.2019թ. ժամը 16:27-ին իրոք ուղարկվել է էլեկտրոնային նամակ Պատվիրատուի «gnumnervanadzor@mail.ru» էլ. փոստի հասցեին***:

Այսպիսով՝ հիմք ընդունելով վերոգրյալը, արձանագրում եմ, որ «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ն 12.04.2019թ. ծանուցվելով որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ, Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ***երեք աշխատանքային օրվա*** ընթացքում

(16.04.2019թ.) ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ուստի գտնում եմ, որ «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ն ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ 19/43 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում չի խախտել ստանձնած պարտավորություն:

Նման պայմաններում գտնում եմ, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.04.2019թ. թիվ 26/26-1/7037-19 գրությամբ «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ